1

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/08/2021

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 04 մայիսի 2021թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի, (այսուհետ՝ Հանձնաժողով), 2021 թվականի ապրիլի 28-ին քննելով ՀՀ ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավոր Անի Սամսոնյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում չներկայացնելու փաստի առթիվ 2021 թվականի փետրվարի 22-ի N 09 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը

ՊԱՐԶԵՑ

1. **Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.**

1.1 Հանձնաժողովը, Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության լրագրող Սամսոն Մարտիրոսյանի դիմումի հիման վրա, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով իրեն վերապահված գործառույթները, պարզել է, որ ՀՀ ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավոր Անի Սամսոնյանի կողմից 2020 թվականի մայիսի 25-ին ներկայացրած «հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում՝ «Բ.6-Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1.-Բանկային

հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում Անի Սամսոնյանը առերևույթ չի հայտարարագրել իր դրամական միջոցները՝ բանկային հաշիվներին առկա մնացորդները, ինչի առնչությամբ 2021 թվականի փետրվարի 22-ին հարուցել է թիվ N --- վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

1.2 2021 թվականի փետրվարի 22-ին Անի Սամսոնյանը հրավիրվել է Հանձնաժողով, վերջինիս բացատրվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, և նրա մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 08/21 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.3 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2021 թվականի ապրիլի 07-ին, ինչի կապակցությամբ Անի Սամսոնյանը պատշաճ ծանուցվել է:

1.4 Անի Սամսոնյանի կողմից 2021 թվականի ապրիլի 19-ին Հանձնաժողովին է ներկայացվել ընկերության և ընկերության կողմից սպասարկվող բանկային հաշիվների վերաբերյալ քաղավածք:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2021 թվականի ապրիլի 28-ին, ինչի կապակցությամբ Անի Սամսոնյանը պատշաճ ծանուցվել է:

2. Վարույթի մասնակցի բացատրությունը.

Վարչական իրավախախտման գործի քննության ընթացքում Անի Սամսոնյանը հայտնել է, որ բանկային հաշվին առկա դրամական միջոցները գոյանում են բացառապես աշխատավարձից, ինչի վերաբերյալ տվյալները ներկայացրել է հայտարարագրի եկամուտներ բաժնում, ուստի հաշվի առնելով, որ չի ունեցել դրամական այլ միջոցներ, կարծել է, որ անհրաժեշտություն չկա հայտարարագրի «Դրամական միջոցներ» բաժնում ներկայացնել բանկային հաշիվներին առկա մնացորդները:

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով թիվ գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների համակողմանի ուսումնասիրություն, հաստատված է համարում հետևյալը.

3.1 Անի Սամսոնյանը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրում՝ «Բ.6-Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1.- Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում չի հայտարարագրել

իր դրամական միջոցները՝ 2019 թվականի հունվարի 01-ի դրությամբ 196,664.5 ՀՀ դրամ, իսկ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 345,756.2 ՀՀ դրամ (հիմք՝ Անի Սամսոնյանի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր, Կենտրոնական բանկ ուղղված հարցման միջոցով պահանջվող ժամանակահատվածի համար ստացված հայտարարատուի բանկային հաշիվների մնացորդների վերաբերյալ տեղեկություններ):

3.2 Հաշվետու ժամանակաշրջանում (2019 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) Անի Սամսոնյանի եկամուտների ստացման աղբյուր է հանդիսացել ՀՀ ազգային ժողովը և եկամուտները ձևավորվել են պատգամավորի պաշտոնի համար օրենքով սահմանված կարգով տրվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից, որոնք վերջինս ստացել է ընկերության կողմից իր անվամբ սպասարկվող բանկային հաշվին փոխանցումներ իրականացնելու միջոցով (հիմք՝ բանկային հաշվի քաղվածք):

3.3 ընկերության կողմից Անի Սամսոնյանի համար սպասարկվող բանկային հաշվում մուտքագրված բոլոր դրամական միջոցները ստացվել են ՀՀ ազգային ժողովի աշխատակազմից:

4. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը:

4.1 Անի Սամսոնյանը իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած), իսկ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը: Դրանից բացի՝ նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված է, որ դրամական միջոցի դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը և արժույթը:

4.3 Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.6 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) **ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա**, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:***

4.8 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ կատարվել է խախտում, այն է՝

ՀՀ ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավոր Անի Սամսոնյանը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրում՝ «Բ.6-Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1.- Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում անզգուշությամբ չի հայտարարագրել իր դրամական միջոցները՝ 2019 թվականի հունվարի 01-ի դրությամբ 196,664.5 ՀՀ դրամ, իսկ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 345,756.2 ՀՀ դրամ, որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, որի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած): Նշված արարքը հանդիսանում է վարչական զանցանք՝ հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28 հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը: Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ հայտարարտուի կողմից չհայտարարագրված գումարի չափը կազմում է 345,756.20 ՀՀ դրամ, և այն չի գերազանցում պաշտոնատար անձի պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը: Միևնույն ժամանակ Հանձնաժողովն արձանագրել է, որ հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչների ավտոմատացված ստուգման համակարգում հայտարարատուի տվյալ տարվա հայտարարագիրը նույնականացվել է որպես ոչ ռիսկային: Բացի այդ, հայտարարտուն ընդունելով իր կողմից խախտում թույլ տալու հանգամանքը, բացատրել է, որ բանկային հաշվին առկա գումարը թաքցնելու միտում չի ունեցել, այլ հայտարարագրի մի բաժնում այն հայտարարագրելով, կարծել է, որ անհրաժեշտություն չկա այն ներկայացնել նաև հայտարարագրի «Դրամական միջոցներ» բաժնում: Նշված

հանգամանքները մատնանշում են, որ խախտման արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավոր Անի Սամսոնյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անի Սամսոնյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ կատարելով բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անի Սամսոնյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Անի Սամսոնյանին տրամադրել 7 աշխատանքային օր՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ